ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստ

ք. Երևան 22 օգոստոսի 2018թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահող՝ Շ. Հարությունյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Գ. Պարոնյան, Ա. Իսկանդարյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Լ.Բաղդասարյան

Գնահատող հանձնաժողովի նիստից հարգելի պատճառով բացակայում ՝ հանձնաժողովի նախագահ Հ. Արչունցը, նիստը նախագահում է Շ. Հարությունյանը:

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում:
3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:
4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է ՝ կողմ 3, դեմ 0:

2. Պետական բյուջեի նկատմամբ մասնակցի ժամկետանց հարկային պարտավորությունների գնահատում

2.1 ՀՀ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սահմանված կարգով և ժամկետում eauction.armeps.am համակարգի միջոցով գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ Հրավերի տեքստի հավելված N 2 և 3: Ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերի տեքստով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին ճանաչել **ընտրված մասնակից**:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել **պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը** և **ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները**:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետ է սահմանվում 10 օրացուցային օր (23.08.2018թ.-01.09.2018թ.):

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 3, դեմ 0:

4.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահող՝ _____ Շ. Հարությունյան

Գնահատող հանձնաժողովի անդամներ՝ _____ Գ. Պարոնյան

_____ Ա. Իսկանդարյան

Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Բաղդասարյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված շահերի բախման բացակայության մասին

ք. Երևան «22» օգոստոսի 2018թ.

«ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամ՝ Շ. Հարությունյանս ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 2)-րդ ենթակետի համաձայն հայտարարում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված իմ կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը կամ ինձ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր կամ քույր) կամ այդ անձի կողմից հիմնադրված կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը չի հանդիսանում սույն ընթացակարգի մասնակից:

Գնահատող հանձնաժողովի անդամ՝ _____ Շ. Հարությունյան